ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հունիսի 2-ից 28-ը

Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Լուսինե Մկրտչյան, ՊԵԿ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ամերիկայի Միացյալ Նահանգներ. 2023թ. հունիսի 2-ից 28-ը:

3. **Հրավիրող կողմը՝**

ԱՄՆ, IVLP ծրագիր:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցություն «International Visitor Leadership Strengthening Law Enforcement Public Relations and Community Outreach» ծրագրին:

5. **Քննարկված թեմաները՝** ԱՄՆ իրավապահ համակարգի, մասնավորապես՝ Արդարադատության նախարարության, Գլխավոր դատախազության և Ոստիկանության տարբեր բաժանմունքներում ներկայացվել են հանրային կապերի մասնագետների աշխատանքները, համայնքների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ իրականացվող աշխատանքները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Հանդիպումներ են եղել Վաշինգտոն քաղաքի, ինչպես նաև Մերիլենդ, Կենտուկի, Ֆլորիդա և Փենսիլվանիա նահանգների իրավապահ մարմինների մամուլի քարտուղարների, հանրային կապերի մասնագետների հետ, որոնց շրջանակներում ԱՄՆ գործընկերների կողմից ներկայացվել է պետական կառույց-ՀԼՄ հարաբերություններն ամրապնդելու ուղղությամբ իրականացված աշխատանքը, կիրառվող մեթոդները, ճգնաժամային իրավիճակներում համակարգված

աշխատանքի մոդելը: Առանձին հանդիպումներ են եղել նաև ոստիկանական բաժանմունքների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում ուսումնասիրվել են հանրության շրջանում իրավապահ համակարգի աշխատակիցների հեղինակության բարձրացմանն ու կառույցի վարկանիշի ամրապնդմանն ուղղված ծրագրերի իրագործման արդյունավետությունը, տեղի է ունեցել փորձի փոխանակում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումների ժամանակ ներկայացրել եմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքը, հարկային և մաքսային ծառայությունների գործառույթները, հանրային կապերի ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքները, հանրային իրազեկումների օրակարգն ու մշտապես թարմացվող գործիքները: Ամերիկյան գործընկերներին տրամադրվել են ՊԵԿ իրազեկման հարթակների էլեկտրոնային հղումներն ու պաշտոնական հասցեները՝ հետագա համագործակցության ուղիները զարգացնելու նպատակով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Գործուղման ձևաչափն առաջարկություններ չի ենթադրում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

30.06.2023թ.